Հիմնավորում

Մասիս համայնքի ավագանու 23.12.2022 թվականի «2023 թվականի բյուջեն հաստատելու մասին թիվ 298-Ն որոշմանը կից 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ հավելվածներում փոփոխություններ կատարելու մասին» որոշման ընդունման

1. **Մասիս համայնքի 2023 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը**

2023 թվականի համայնքի բյուջեի եկամտային և ծախսային մասերի փոփոխությունը պայմանավորված է մի շարք ծրագրերի իրագործմամբ և համայնքում ծագած որոշակի խնդիրներին լուծում տալու անհրաժեշտությամբ:

Առկա խնդիրների նկարագրությունը

Բյուջեի ֆոնդային մասի փոփոխությունը պայմանավորված է հետևյալ խնդիրներին լուծում տալու անհրաժեշտությամբ.

Դաշտավան բնակավայրի մանկապարտեզի գազաֆիկացման և ջեռուցման համակարգի անցկացման համար փորձաքննություն անցած նախագծա-նախահաշվային փաստաթղթերի ձեռք բերման համար ահրաժեշտ է 550 000 դրամ: Մասիս քաղաքի արհեստական լճին հարակից տարածքի բարեկարգման համար անհրաժեշտ է 15 170 000 դրամ: Ոռոգման համակարգի հիմնանորոգման համար անհրաժեշտ է 200 000 000 միլիոն դրամ, գազաֆիկացման աշխատանքների համար՝ 43 443 928 դրամ: Ճանապարհային երթևեկության նշանների ձեռք բերման համար անհրաժեշտ է 3 500 000դրամ:

Արցախից տեղահանված ընտանիքներին աջակցելու նպատակով մահճակալների ձեռք բերման համար անհրաժեշտ է 500 000 դրամ:

Բյուջեի վարչական մասում անհրաժեշտ է.

Համայնքում գործող դպրոցներին աջակցելու համար 13 950 000 դրամ, որից Այնթապի ,,Արամ և Հասմիկ Կարամանուկյանների անվան թիվ 1 միջնակարգ դպրոց'' ՊՈԱԿ-ին մարզադաշտի կառուցման աշխատանքների համար 8 000 000 դրամ և համայնքում գործող դպրոցների սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին դասագրքերի գումարների փոխհատուցման համար՝ 5 950 000 դրամ:

Մի շարք բարերարներ պատրասկամություն են հայտնել աջակցել համայնքին՝ համայնքի բյուջե նվիրաբերության գումարներ մուտքագրել մոտ 15 000 000 միլիոն դրամի չափով՝ Արցախից տեղահանված և համայնքում ապաստանած ընտանիքների հրատապ խնդիրները լուծելու և առաջնային կարիքները հոգալու համար:

Ստորև ներկայացվում է բյուջեի փոփոխության վերաբերյալ տեղեկանքը:

ՏԵՂԵԿԱՆՔ

Իրավական ակտն ընդունելու դեպքում համայնքի բյուջեի վարչական և ֆոնդային մասում եկամուտների և ծախսերի նվազեցումների և ավելացումների

Հազար դրամ

h/h	բաժին	խումբ	դաս	Գործառական դասակարգում, նպատակ	հոդված	Վարչական մասի Ծախսեր	Վարչական մասի Մուտքեր	Ֆոնդային մասի Ծախսեր
				Եկամուտներ				
1				Նվիրաբերություն համայնքին Արցախից տեղահանված և համայնքում ապաստանած ընտանիքներին աջակցելու համար			15000,00	
				Ծախսեր				
2	01	1	1	**Օրենսդիր և գործադիր մարմիններ.**				
				Պարգևատրում	4112	-5960,00		
3	01	6	1	**Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ.**				
				Վարչական սարքավորումներ	5122			-19720,00
				Արցախից տեղահանված ընտանիքներին աջակցելու նպատակով մահճակալների ձեռք բերման համար	5122			500,00
4	04	2	4	**Ոռոգում.**				
				Համայնքի վարչական տարածքում Ոռոգման համակարգի կապիտալ նորոգում	5113			200000,00
5	04	3	2	**Նավթամթերք և բնական գազ.**				
				Համայնքի բնակավայրերում գազաֆիկացման աշխատանքներ	5112			43443,928
6	04	5	1	**Ճանապարհային տրանսպորտ.**				
				Համայնքային ճանապարհների հիմնանորոգում	5113			-243443,928
				Ճանապարհային երթևեկության նշանների ձեռք բերում	5129			3500,00
7	08	1	1	**Հանգստի և սպորտի ծառայություններ.**				
				Մասիս քաղաքի արհեստական լճին հարակից տարածքի բարեկարգում	5113			15170,00
8	08	2	4	**Այլ մշակութային կազմակերպություններ.**				
				Միջոցառումների համար նյութերի ձեռք բերում	4269	-8000,00		
9	09	1	1	**Նախադպրոցական կրթություն.**				

				Դաշտավանի մանկապարտեզի գազաֆիկացման և ջեռուցման համակարգի անցկացման աշխատանքների նախագծա-նախահաշվային աշխատանքներ	5134			500,00
				փորձաքննություն	5134			50,0
10	**09**	**2**	**2**	**Միջնակարգ կրթություն.**				
				Այնթապի ,,Արամ և Հասմիկ Կարամանուկյանների անվան,, թիվ 1 միջնակարգ դպրոցին աջակցություն	4819	8000,00		
				Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների համար աջակցություն դպրոցներին	4819	5960,00		
11	**10**	**7**	**1**	**Սոցիալական արտոնություններ.**				
				Բարերարների կողմից բյուջե մուտքագրված միջոցների հաշվին Արցախից տեղահանված և համայնքում ապաստանած ընտանիքների առաջնային կարիքները հոգալու նպատակով տրվող աջակցություն:	4729	11000,00		
				Բարերարների կողմից բյուջե մուտքագրված միջոցների հաշվին Արցախից տեղահանված և համայնքում ապաստանած ընտանիքների առաջնային կարիքների համար ապրանքների ձեռք բերում	4269	4000,00		
						15000000,00	***15000000,00***	***0,00***
				Ընդամենը				

2023 թվականի բյուջեի փոփոխությունների արդյունքում վարչական մասի եկամուտները և ծախսերը կավելանան 15 000 000 դրամով:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Ա. ԿՈՍՏԱՆՅԱՆ